

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քին. Մելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Մեպտեմբերի 30, 2008թ.

**Ամենայն Հայոց Կաթողիկոսը նոր օրհնված Ս. Մյուռնը
բաշխեց թեմակալ առաջնորդներին**

Մեպտեմբերի 30-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մյուռնօրհնեքի առիթով Մայր Աթոռում համախմբված Հայ Առաքելական Եկեղեցու Հայաստանի և աշխարհասփյուռ հայոց թեմերի առաջնորդներին:

Հայոց Հայրապետը, ողջունելով եպիսկոպոսաց դասին, իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց, որ Աստծո ողորմությամբ միասնական աղոթքով սեպտեմբերի 28-ին կատարվեց Մյուռնօրհնության նվիրական արարողությունը, և երկնային շնորհներն առատորեն հեղվեցին մեր Հայրենիքի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վրա:

Նորին Սրբությունն իր խոսքում նշեց, որ մխիթարական էր տեսնել, որ աշխարհի տարբեր ծայրերից բազում հավատավոր հայորդիներ էին ժամանել՝ իրենց ուխտը կատարելու և աղոթքն առ Աստված բարձրացնելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Ուրախալի էր նաև, որ Հայոց Եկեղեցու համար կարևոր այս իրադարձությանը ներկա էին քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, հայոց պետական ավագանին՝ գլխավորությամբ ՀՀ նախագահ տիար Մերժ Սարգսյանի:

Վեհափառ Հայրապետը նաև իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց Մյուռնօրհնության նախապատրաստման հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ Արևմտյան հայոց թեմի առաջնորդ Տ. Հովման արքեպիսկոպոս Տերտերյանին և հանձնախմբի անդամներին՝ Մյուռնօրհնության աշխատանքները լավագույնս կազմակերպելու, նրանց նախանձախնդիր և հետևողական ծառայությունների համար:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը թեմակալ առաջնորդներին բաշխեց գեղարդակերպ սափորներով նոր Մյուռնը՝ մաղթելով, որ Տերը Ս. Հոգու շնորհներով զորացնի նրանց իրենց առաքելության մեջ՝ բարի արդյունքներ ապահովելու մեր Եկեղեցու պայծառության և ժողովրդի բարօրության համար:

Առաջիկա օրերին թեմակալ առաջնորդները կմեկնեն իրենց թեմեր՝ տանելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը և նորօրհնյալ Ս. Մյուռնն իրենց բարեպաշտ հոտին:

###